Հարկերի վճարում՝ էլեկտրոնային եղանակով

Պետական վճարումների e-payments առցանց համակարգը գործում է արդեն երկու տարի՝ հնարավորություն տալով քաղաքացիներին առցանց եղանակով առանց աշխատանքից կտրվելու և լրացուցիչ ժամանակ վատնելու կատարել անհրաժեշտ վճարումները: Սկզբնապես այս համակարգի միջոցով հնարավոր էր վճարել պետական տուրքերը, տեղական տուրքերը, պետական կամ տեղական ինքնակառավարման մարմինների կողմից մատուցվող ծառայությունների համար գանձվող վճարները, ինչպես նաև վարչական տուգանքները: Միևնույն ժամանակ e-payments-ը մշտապես համալրվում է նոր ծառայություններով և գործիքներով: 2013 թվականին հնարավորություն տրվեց անհատ ձեռներեցներին, մանր ու միջին ձեռնարկատերերին այս համակարգով վճարել հարկերը: Համակարգն ընդունում է նաև համայնքային վճարումներ, օրինակ՝ գույքահարկ, հողի հարկ, աղբահանության վճարներ: Այժմ այս ծառայությունից կարող են օգտվել Երևան, Գյումրի և Վանաձոր քաղաքների բնակիչները, առաջիկայում նախատեսվում է ներառել նաև մյուս համայնքները: